Մոգո

**Կարևոր իրազեկում**

# Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԲՈՂՈՔ ՈՒՆԵՔ

## 1. Ծանոթացեք Ձեր իրավունքներին

**Կազմակերպության յուրաքանչյուր աշխատակից պարտավոր է.**

- Ձեզ ուղղորդել բողոքների հարցերով զբաղվող աշխատակցի մոտ
- Տրամադրել հաղորդակցման համար անհրաժեշտ տվյալներ (հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե)

**Պատասխանատու աշխատողը պարտավոր է**

- **Տեղեկացնել** Ձեր իրավունքների և բողոքների քննության գործընթացի մասին
- **Տրամադրել** **Ընկերությունում** գործող համապատասխան կանոնները և Հայտի ձևը

## 2. ԴԻՄԵՔ

### «Մոգո» ՈՒՎԿ ՍՊԸ

Գրավոր բողոքը ներկայացրեք պատասխանատու աշխատակցին կամ ուղարկեք հետևյալ հասցեով.

✉ *Հայաստանի* Հանրապետություն, Երևան 0015, Վարդանանց փ. 18/2, 4,5,6 տարածքներ

- **Նշեք** Ձեր տվյալները՝ պատասխանը ստանալու համար
- Անպայման վերցրեք ստացականը և պահպանեք մինչև հարցի վերջնական լուծումը

10 օր անց

## 3. ԾԱՆՈԹԱՑԵՔ ՊԱՏԱՍԽԱՆԻՆ

**Ընկերությունը** բողոքի վերաբերյալ որոշում է կայացնում (բավարարել, մասնակի բավարարել, մերժել) 10 աշխատանքային օրվա ընթացքում

Հարցեր ունենալու դեպքում կապ հաստատեք պատասխանատուի հետ

☎ (+374 12) 700 700

Բավարարված չե՞ք

## 4. ԴԻՄԵՔ

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻՆ, եթե

- Ֆիզիկական անձ եք
- Բողոքը վերաբերում է մատուցվող ծառայությանը և ունեք գումարային պահանջ (մինչև 10 մլն դրամ), կամ բողոքը առնչվում էվճարկային զեկույցում ներառված տեղեկատվությանը
- 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխան չեք ստացել կամ պատասխանը Ձեզ չի բավարարում
- Բողոքը չի քննվում դատարանում կամ արբիտրաժային տրիբունալում
- Պատասխանից հետո չի անցել 6 ամիս
- Բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից հետո

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՎՃԱՐ ԵՆ**

(Երևան, 0010 Մ. Խորենացու փողոց 15, Էլիտ պլազա բիզնես կենտրոն, 7-րդ հարկ, +37460701111, info@fsm.am)

### ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼ

- Եթե Ձեր և **Ընկերության** միջև կնքվել է արբիտրաժային համաձայնություն, ապա ձեր միջև ծագող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից
- Պայմանագիր կնքելիս՝ Դուք իրավունք ունեք հրաժարվելու արբիտրաժային համաձայնությունից, **Ընկերությունը** պարտավոր է Ձեզ ծառայություն մատուցել
- Հիշեք՝ նույնիսկ արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, քանի դեռ բողոքը չի քննվել տրիբունալում
- Հաշտարարը իրավասու չէ ընդունել բողոքը, եթե այն արդեն քննվում է տրիբունալում

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

- Դուք կարող եք նաև դիմել Կենտրոնական բանկ, և Ձեր բողոքին կպատասխանեն 15 աշխատանքային օրվա ընթացքում (Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 6, (374-10) 592 697, customerinfo@cba.am)
- Եթե Ձեր բողոքը այլ կառույցների իրավասության դաշտում է, ապա Կենտրոնական բանկը Ձեր հարցը կուղղորդի նրանց տիրույթ
- Կենտրոնական բանկը խորհուրդ է տալիս Ձեր խնդրանքով նախևառաջ դիմել **Ընկերությանը** (քայլ 2)

### ԴԱՏԱՐԱՆ

- Դուք միշտ կարող եք դիմել դատարան
- Դատարանի վճիռը ենթակա չէ վերանայման Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից

**ՀԱՐՑԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԴԻՄԵՔ**